

Հարցազրույց «ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) գիտահետազոտական բաժինների վարիչների հետ հարցազրույցներ» շարքից:

2022թ. ապրիլի 6

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) «Աստղագիտական շրջահայություններ» ԳՀ բաժնի վարիչ, ԲԱ տնօրեն և Հայկական աստղագիտական ընկերության տնօրեն, ֆմգթ Արեգ Միքայելյանի հետ



Արեգ Միքայելյան

Հարգելի պրն Միքայելյան,

1. Խնդրում եմ նկարագրել Ձեր դեկավարած գիտահետազոտական բաժինը՝ քանի՞ գիտաշխատողից է այն կազմված (մի փոքր ներկայացրեք նրանց), և որո՞նք են ուսումնասիրության հիմնական ուղղությունը, թեմաները, առաջադրված խնդիրները:

«Աստղագիտական շրջահայություններ» գիտահետազոտական (ԳՀ) բաժինն ամենամեծն է ԲԱ-ում: Այն բաղկացած է 8 հոգուց՝ բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող ֆմգթ Արեգ Միքայելյան, ավագ գիտաշխատող ֆմգթ Կամո Գիգոյան, գիտաշխատող ֆմգթ Հայկ Աբրահամյան, գիտաշխատող ֆմգթ Գայանե Կոստանյան, գիտաշխատողներ Գուրգեն Պարոնյան և Գոռ Միքայելյան, ավագ լաբորանտներ Լիանա Համբարձումյան և Կարեն Գիգոյան: Վերջին երկուսը ԵՊՀ մագիստրատուրայի ուսանողներ են և վերջերս են միացել բաժնին: Մինչև անցյալ տարվա սկիզբը մեզ հետ աշխատում էր նաև գիտաշխատող ֆմգթ Մարիետա Գյուլգադյանը, ով հետո մեկնեց ԱՄՆ: Հ. Աբրահամյանը և Գ. Կոստանյանը վերջերս (2020 և 2021թթ.) են պաշտպանել

թեկնածուական թեզերը, ներկայումս թեզերի վրա աշխատում են Գ. Պարոնյանը և Գ. Միքայելյանը:



Կամո Գիգոյան, Հայկ Աբրահամյան, Գայանե Կոստանյան, Գուրգեն Պարոնյան, Գոռ Միքայելյան



Լիանա Համբարձումյան, Կարեն Գիգոյան, Տիգրան Արշակյան, Վաղերի Համբարյան

Հարկ է նշել, որ բաժնի աշխատակիցները շատ ակտիվ են նաև աստղադիտարանի վարչական, տեխնիկական, կրթական, խմբագրական, կազմակերպական և հանրային հարցերում: Գ. Պարոնյանը «Դիտողական աստղագիտություն», իսկ Գ. Միքայելյանը «Աստղահինֆորմատիկա» ենթակառուցվածքային բաժինների վարիչներն են, Գ. Կոստանյանը՝ Դիտողական արխիվի («Ապակեդարանի») պատասխանատուն, Կամո Գիգոյանը՝ 2.6մ աստղադիտակի դիտողական խմբի անդամ: Հ. Աբրահամյանը դասավանդում է Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի ավագ դպրոցում, վարում է աստղագիտական խմբակ, ինչպես նաև հանրապետական օլիմպիադաների ժուրիի անդամ է: Ինքս ԲԱ գիտական խորհրդի նախագահն են, մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալը, մի շարք միջազգային կազմակերպությունների և հանձնաժողովների անդամ, «Աստղաֆիզիկա» և «ԲԱ հաղորդումներ» ամսագրերի (ինչպես նաև մի շարք միջազգային ամսագրերի) խմբագրության անդամ: Գ. Միքայելյանի և Հ. Աբրահամյանի հետ միասին ակտիվ իրականացնում ենք ԲԱ գիտաժողովների և ամառային դպրոցների կազմակերպումը: Գ. Միքայելյանն

իրականացնում է ԲԱ և մի շարք այլ համացանցային կայքէջերի կառուցումը և ընթացիկ սպասարկումը: Ներկայացվում են դասախոսություններ ԲԱ ամառային դպրոցների և Հայկական աստղագիտական ընկերության (ՀԱԸ) դպրոցական դասախոսությունների ծրագրի շրջանակներում:

Մեր բաժնում կա երկու հիմնական ուղղություն, կարելի է ասել երկու ենթաբաժին. **արտագալակտիկական հետազոտություններ՝ ակտիվ գալակտիկաների բազմալիքային որոնումներ և ուսումնասիրություններ** (Ա. Միքայելյան, Հ. Աբրահամյան, Գ. Պարոնյան, Գ. Միքայելյան և Լ. Համբարձումյան, մինչև անցյալ տարի նաև՝ Մ. Գյուլզադյան) և **ուշ սպեկտրային դասերի աստղերի որոնումներ և բազմակողմանի ուսումնասիրություններ** (Կամո Գիգոյան, Գ. Կոստանդյան և Կարեն Գիգոյան):

Առաջինի դեպքում հիմնական խնդիրներն են ակտիվ գալակտիկաների ուսումնասիրության միջոցով պարզել գալակտիկաների էվոլյուցիայի հարցերը, դրանց էներգիայի աղբյուրները, ինչպես նաև գալակտիկաների ճառագայթման մեխանիզմները, մասնավորապես Միացյալ մոդելի նրբությունները: Երկրորդի դեպքում հիմնական խնդիրներն են աստղային էվոլյուցիայի և աստղերի քիմիական բաղադրության պարզաբանումը և Մեր Գալակտիկայի կինեմատիկայի ու քիմիական էվոլյուցիայի ուսումնասիրությունը:

2. Ի՞նչ ծրագրերի շուրջ եք այժմ աշխատում: Ինչպիսի՞ միջազգային կամ տեղական համագործակցություններ ունեք:

Մեր հիմնական ընդհանուր թեման է **«Ակտիվ գալակտիկաների բազմալիքային որոնումները և ուսումնասիրությունները»**: Դրա շրջանակներում իրականացնում ենք օպտիկական, ռենտգենյան, ԳՄ, ԵԿ և ռադիո տիրույթների հետազոտություններ և այդ տիրույթների տվյալների մշակում, վերլուծություն, վիճակագրություն:


Ներկա կարևորագույն ծրագիրն է ՀՀ ԳԿ Առաջատար հետազոտությունների նախագիծը՝ **«Գալակտիկաների էվոլյուցիայի վաղ փուլերի բացահայտումն ակտիվ գալակտիկաների բազմալիքային ուսումնասիրության միջոցով»**: Այստեղ մեզ են միացել նաև ԲԱ «Ակտիվ գալակտիկաներ» ԳՀ բաժնի վարիչ Ռուբեն Անդրեասյանը և նույն բաժնի աշխատակից Անդրանիկ Սուքիասյանը, ինչպես նաև Հայկական

Պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի ուսանող Վարդուհի Մկրտչյանը: Նախագիծը 5 տարով է (2021-2026 թթ.) և էապես կնպաստի մեր աշխատանքների է՛լ ավելի ակտիվացմանը:

Գալակտիկական հետազոտությունների շրջանակներում Կամո Գիգոյանի ղեկավարած ենթաբաժինը զբաղվում է Առաջին բյուրականյան շրջահայության (FBS) ուշ դասերի աստղերի, ինչպես նաև ԵԿ աղբյուրների և փոփոխական աստղերի կատալոգներից և տվյալների շտեմարաններից ընտրված աստղերի ուսումնասիրությամբ և դրանց տվյալների վերլուծությամբ:

Մեր բաժինն ունի երկու արտասահմանյան խորհրդատու, երկուսն էլ Գերմանիայից՝ Տիգրան Արշակյան (Քյոլնի համալսարան) և Վալերի Համբարյան (Յենայի համալսարան):

Ներկա ՀՀ ԳԿ Առաջատար հետազոտությունների նախագծում արտասահմանյան գործընկեր է հանդիսանում պրոֆ. Միշել Դենեֆելդը (Փարիզի աստղաֆիզիկայի ինստիտուտ՝ IAP, Ֆրանսիա): Մյուս գործընկերներից նշեմ Մարկուս Դեմլայթերին (Հայդելբերգ,



Գերմանիա), Ալեն Մարկիսյանին, Մուստաֆա Մեֆտային, Ժերոմ Բերթյեին և Ուիլյան Թյուլոյին (Փարիզ, Ֆրանսիա), Ֆրեդերիկ Զամկոսցյանին և Դելֆին Ռուսեյին (Մարսել, Ֆրանսիա), Նիկոլա Մորոնին (Մոնպելյե, Ֆրանսիա), Ռոբերտո Նեշին և Կորին Ռոսին (Հռոմ, Իտալիա), Տիմ Կենդալին (Միացյալ Թագավորություն), Քելի Համբլթոնին (Վիլանովա, Փենսիլվանիա, ԱՄՆ), Թոմաս Լեբգելտերին (Վիեննա, Ավստրիա), Օլեգ Մալկովին (Մոսկվա, Ռուսաստան), ում հետ ունենք համատեղ հրապարակումներ:

Տեղական համագործակցություններից կառանձնացնեմ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի (ԻԱՊԻ) հետ

աստղաինֆորմատիկայի ոլորտում կատարած աշխատանքները Հրաչյա Ասցատրյանի, Արամ Կնյազյանի և այլոց հետ:

3. Վերջին տարիների գիտական ի՞նչ հայտնագործություններ կառանձնացնեք:

Մենք հայտնաբերել և պարբերաբար հայտնաբերում ենք բազմաթիվ նոր աստղեր և գալակտիկաներ: Դրանցից ամենակարևորները.

- Շուրջ 3000 ռենտգենյան աղբյուրների նույնացումները օպտիկական օբյեկտների հետ. բազմաթիվ ակտիվ գալակտիկաների հայտնաբերումը և դասակարգումը:
- Գերլուսատու ենթակարմիր գալակտիկաների (ULIRG) հայտնաբերումը ԵԿ աղբյուրների մեջ: Սրանք Տիեզերքի ամենահզոր ԵԿ աղբյուրներն են և առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում աստղաֆիզիկայում:
- Փոփոխական ռադիո աղբյուրների հայտնաբերումը խոշորագույն NVSS և FIRST ռադիո կատալոգների խաչաձև համապատասխանեցումների միջոցով՝ մեր մշակած մեթոդիկայով:
- Բազմաթիվ ակտիվ գալակտիկաների և դրանց միջուկների (քվազարներ, բլազարներ, Սեյֆերտներ, Լայներներ, աստղառաջացման բռնկումով գալակտիկաներ, բաղադրյալ սպեկտրներով գալակտիկաներ) հայտնաբերումը Սլոանի երկնքի թվային շրջահայության (SDSS) սպեկտրների դասակարգումների միջոցով:
- Նոր ածխածնային (C) և M դասի աստղերի, ԵԿ և փոփոխական աստղերի հայտնաբերումը թե՛ Առաջին բյուրականյան շրջահայությունից և թե՛ միջազգային տվյալների շտեմարանների վերլուծությունների հիման վրա:

Հայտնաբերված նոր օբյեկտները հրապարակվել են կատալոգների տեսքով, որոնք առկա են աստղագիտական կատալոգների միջազգային ամենահեղինակավոր Vizier շտեմարանում (Ստրասբուրգ, Ֆրանսիա):

Գտնվել են աստղերի և գալակտիկաների ֆիզիկական և տարածական բնութագրերի մի շարք օրինաչափություններ: Իրականացվել է գալակտիկաների մանրակրկիտ դասակարգում ըստ ակտիվության դասերի, ներմուծվել են մի շարք նոր դասեր և ենթադասեր:

4. Տպագրված կամ դեռ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ նշանակալից գիտական հոդվածներ կնշեք:

Հատկապես կարևոր են համարվում բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում տպագրությունները: Վերջին տարիներին մեր բաժնի աշխատանքները տպագրվել են Astronomy & Astrophysics (A&A), Monthly Notices of the Royal Astronomical Society (MNRAS), Astrophysics & Space Science (Ap&SS), Frontiers in Astronomy & Space Sciences (FrA&SS), Icarus, Astronomy & Computing (A&C), Publications of the Astronomical Society of Australia (PASA), Astronomische Nachrichten (AN), Revista Mexicana de Astronomía y Astrofísica (RMxAA), Romanian Astronomical Journal (RomAJ), Baltic Astronomy (BA), *Астрономический журнал* (АЖ), *Письма в астрономический журнал* (ПАЖ), *Astronomical and Astrophysical Transactions* (A&ApTr), *Астрофизика/Astrophysics* (Afz/Ap), *Communications of BAO* (ComBAO) և այլ ամսագրերում: Հատկապես կառանձնացնեի հետևյալները.

- **Mickaelian, A. M.**; Andreasyan, R. R.; **Abrahamyan, H. V.**; **Paronyan, G. M.**; **Mikayelyan, G. A.**; Sukiasyan, A. G.; Mkrtchyan, V. K. – Multiwavelength search for and studies of active galaxies (Ակտիվ գալակտիկաների բազմալիքային որոնումներ և ուսումնասիրություններ), *A&ApTr* 32, p. 331, 2021
- **Mickaelian, A. M.**; **Abrahamyan, H. V.**; **Paronyan, G. M.**; **Mikayelyan, G. A.** – Fine classification of QSOs and Seyferts for activity types based on SDSS spectroscopy (Քվազարների և Սեյֆերտների նուրբ դասակարգումն ըստ ակտիվության դասերի SDSS սպեկտրադիտության հիման վրա), *FrA&SS* 7, p. 82, 2021
- **Gigoyan, K. S.**; Lebzelter, T.; **Kostandyan, G. R.**; Karapetyan, E.; Baghdasaryan, D.; **Gigoyan, K. K.** – New results for FBS late-type stars using Gaia EDR3 data (Նոր արդյունքներ FBS ուշ դասերի աստղերի համար օգտագործելով Գայայի տվյալների 3-րդ նախնական թողարկման տվյալները), *PASA* 38, p. 51, 2021
- Astsatryan, H.; Gevorgyan, G.; Knyazyan, A.; **Mickaelian, A. M.**; **Mikayelyan, G. A.** – Astronomical objects classification based on the Digitized First Byurakan Survey low-dispersion spectra (Աստղագիտական օբյեկտների դասակարգումը Թվայնացված առաջին բյուրականյան շրջահայության ցածրդիսպերսային սպեկտրների հիման վրա), *A&C* 3400442, 2021

-
- Mauron, N.; **Gigoyan, K. S.**; Kendall, T. R.; Hambleton, K. M. – A search for distant, pulsating red giants in the southern halo (Հեռավոր բարախող կարմիր հսկաների որոնումներ Գալակտիկայի հարավային հալոյում), A&A 650A, p. 146, 2021
 - **Paronyan, G. M.**; **Mickaelian, A. M.**; **Abrahamyan, H. V.**; **Mikayelyan, G. A.** – Catalog of X-Ray Active Galactic Nuclei Based on ROSAT BSC and FSC Sources (Ռենտգենյան ակտիվ գալակտիկական միջուկների կատալոգ ROSAT պայծառ և թույլ աղբյուրների կատալոգների հիման վրա), Ap 64, p. 277, 2021
 - **Gigoyan, K. S.**; **Kostandyan, G. R.**; **Gigoyan, K. K.**; Sarkissian, A.; Meftah, M.; Russeil, D.; Zamkotsian, F.; Rahmatullaeva, F. D.; **Paronyan, G. M.** – Investigations of the Periodic Variables in the Catalina and Linear Databases (Կատալինա և Լինեար տվյալների շտեմարաններում պարբերական փոփոխականների ուսումնասիրություն), Ap 64, p. 20, 2021
 - **Abrahamyan, H. V.**; **Mickaelian, A. M.**; **Paronyan, G. M.**; **Mikayelyan, G. A.** – Classification by Activity Type of a Sample of Active Galaxies with Radio Emission (Ռադիո ճառագայթում ունեցող ակտիվ գալակտիկաների ընտրանքի դասակարգումն ըստ ակտիվության դասերի), Ap 63, p. 322, 2020
 - **Gigoyan, K. S.**; **Mickaelian, A. M.**; **Kostandyan, G. R.** – Revised and updated catalogue of the First Byurakan Survey of Late-Type Stars: second edition (Առաջին բյուրականյան շրջահայության ուշ դասերի աստղերի վերանայված և թարմացված կատալոգ երկրորդ թողարկում), MNRAS 489, p. 2030, 2019
 - **Abrahamyan, H. V.**; **Mickaelian, A. M.**; **Paronyan, G. M.**; **Mikayelyan, G. A.** – Optical variability of blazars (Բլազարների օպտիկական փոփոխականությունը), AN 340, p. 437, 2019
 - **Mickaelian, A. M.**; Sarkissian, A.; Berthier, J.; Meftah, M.; Thuillot, W.; Vachier, F. – Search and study of asteroids from the digitized first Byurakan survey using virtual observatory tools (Աստղակերպերի որոնումներ և ուսումնասիրություն Թվայնացված առաջին բյուրականյան շրջահայությունից վիրտուալ աստղադիտարանների գործիքների կիրառմամբ), Icarus 330, p. 5, 2019
 - **Mikayelyan, G. A.**; **Mickaelian, A. M.**; **Abrahamyan, H. V.**; **Paronyan, G. M.**; **Gyulzadyan, M. V.** – Spectral Classification of Ultrabright IR Galaxies from The IRAS PSC/FSC Combined

Catalog (Գերալայծառ ԵԿ գալակտիկաների սպեկտրային դասակարգումը IRAS կետային և թույլ աղբյուրների միացյալ կատալոգից), *Ap* 62, p. 452, 2019

- **Gigoyan, K. S.; Kostandyan, G. R.; Gigoyan, K. K.;** Zamkotsian, F.; Sarkissian, A. – New Carbon Stars Confirmed in the Digitized First Byurakan Survey Database (Նոր ածխածնային աստղեր՝ հաստատված Թվայնացված առաջին բյուրականյան շրջահայության տվյալների շտեմարանում), *Ap* 62, p. 573, 2019
- **Mickaelian, A. M.; Abrahamyan, H. V.; Gyulzadyan, M. V.; Paronyan, G. M.; Mikayelyan, G. A.** – Markarian galaxies in UV and multiwavelength studies (Մարգարյանի գալակտիկաները ԳՄ-ում և բազմալիքային ուսումնասիրություններ), *Ap&SS* 363, p. 237, 2018
- **Abrahamyan, H. V.; Mickaelian, A. M.; Paronyan, G. M.; Mikayelyan, G. A.; Gyulzadyan, M. V.** – Radio variable sources at 1400 MHz and their optical variability (Ռադիո փոփոխական աղբյուրները 1400 ՄՀց-ում և դրանց օպտիկական փոփոխականությունը), *A&C* 25, p. 176, 2018
- **Mickaelian, A. M.;** Harutyunyan, G. S.; Sarkissian, A. – Study and Classification of SDSS Spectra for Byurakan-IRAS Galaxies (Բյուրական-IRAS գալակտիկաների SDSS սպեկտրների ուսումնասիրություն և դասակարգում), *Astronomy Letters (ՊԱՋ)* 44, p. 351, 2018

Ունենք նաև գիտաժողովների նյութերում հրապարակված բազմաթիվ աշխատանքներ, Vizier շտեմարանում ընդգրկված էլեկտրոնային կատալոգներ, գրքեր և գրքույկներ, հոդվածներ գրքերում, էլ.-նախաստիպեր, գիտահանրամատչելի հոդվածներ:

5. ԳՀ բաժնի գործունեության այլ կարևոր ցուցանիշներ՝ գիտաժողովների մասնակցություն, զեկուցումներ, սեմինարներ, դրամաշնորհային նախագծեր, մրցանակներ:

Բաժնի աշխատակիցները չափազանց ակտիվ են գիտաժողովների մասնակցության, զեկուցումների, սեմինարների, դրամաշնորհային նախագծերի և գիտական և գիտակազմակերպական այլ գործունեության հարցերում:

Մենք մասնակցում ենք Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ, IAU) գլխավոր ասամբլեաներին և գիտաժողովներին, Եվրոպական (ԵԱԸ, EAS) և Եվրասիական (ԵԱԱԸ, EAAS) աստղագիտական ընկերությունների տարեկան համագումարներին, Բյուրականում տեղի ունեցող բոլոր գիտաժողովներին, ներկայացնում ենք բազմաթիվ զեկուցումներ: Ինքս մասնակցում եմ մի շարք միջազգային կառույցների աշխատանքներին՝ Հորիզոն 2020 / Հորիզոն Եվրոպա (H2020 /Horizon Europe), ՄԱՄ աստղագիտության զարգացման գրասենյակ (IAU OAD), Վիրտուալ աստղադիտարանների միջազգային պլանս (IVOA), Մոլորակային տվյալների միջազգային պլանս (USU, IPDA) և այլն: Պարբերաբար առցանց զեկուցումներ և դասախոսություններ եմ ունենում զանազան հանրությունների համար՝ թե՛ տեղական և թե՛ միջազգային:

Միայն 2017-2022թթ. մեր բաժնի աշխատակիցների կողմից ներկայացվել է ԲԱ գիտական և տեղեկատվական 29 սեմինար, ինչպես նաև եղել են մի քանի արտասահմանյան սեմինարներ: Դրանցից վերջինը Գ. Կոստանդյանի կողմից ներկայացված Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի աստղագիտության ինստիտուտի (ИНАСАН) համար 2021թ. սեմինարն էր իր թեկնածուական թեզի թեմայով:

Դրամաշնորհային նախագծերով նույնպես բավականին ակտիվ ենք: Արդեն նշվեց ՀՀ ԳԿ առաջատար հետազոտությունների նախագծի մասին (Ա. Միքայելյան՝ 2021-2026 թթ.), ընթացքում է նաև [ANSEF դրամաշնորհ](#) (Ա. Միքայելյան՝ 2021-2022թթ.), իսկ մինչ այդ շահել ենք ՀՀ ԳԿ թեմատիկ դրամաշնորհ (Ա. Միքայելյան՝ 2015-2017թթ.), ՀՀ ԳԿ և Գերմանիայի Կրթության և գիտության նախարարության համատեղ դրամաշնորհ (Ա. Միքայելյան՝ 2017-2019թթ.), ANSEF դրամաշնորհներ (Ա. Միքայելյան՝ 2016թ., Հ. Աբրահամյան՝ 2016թ., Կ. Գիգոյան՝ 2019-2020 թթ., Գ.

Միքայելյան՝ 2020-2021թթ.), Վ. Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակի 2019-2020թթ. դրամաշնորհներ (Հ. Աբրահամյան, Գ. Միքայելյան, Կ. Գիգոյան) և այլն (COST, Erasmus):

2015-2021թթ. բաժնի աշխատակիցների մեծ մասն ընդգրկված էր նաև [«ԲԱ ղիտոդական արխիվի թվայնացում»](#) լայնածավալ նախագծի մեջ, ընդ որում այդ նախագծի ղեկավարներն ենք եղել ես (2015-2017թթ.), Կ. Գիգոյանը (2017-2018 թթ.) և Գ. Միքայելյանը (2020-2021թթ.):

Հ. Աբրահամյանը, Գ. Միքայելյանը և Գ. Պարոնյանը մասնակցում են «Տիեզերական մնացորդային բեկորների մշտադիտարկման» ԲԱ և Ռոսկոսմոսի համատեղ ծրագրին:

Բաժնի աշխատակիցներից 4-ս (Ա. Միքայելյան, Հ. Աբրահամյան, Գ. Պարոնյան, Գ. Միքայելյան) արժանացել ենք ՀՀ նախագահի 2020թ. մրցանակին (Պողոսյան մրցանակ)՝ առաջին անգամ ԲԱ-ի աշխատակիցների կողմից: Երիտասարդ գիտաշխատողներ Հ. Աբրահամյանը, Գ. Պարոնյանը և Գ. Միքայելյանը 2013-2021թթ. ընթացքում 4 անգամ արժանացել են Հայկական աստղագիտական ընկերության (ՀԱԸ) տարեկան մրցանակներին:

Կարելի է վստահաբար ասել, որ մեր բաժինը բոլոր ցուցանիշներով ԲԱ-ում ամենաակտիվն է:

6. Ձեր կարծիքով ինչո՞ւմ է կայանում աստղագիտության կարևորությունը մարդկության և Հայաստանի զարգացման գործում:

Շատերին թվում է, թե աստղագիտությունը մի ռոմանտիկ գիտություն է և առանձնապես կապ չունի երկրային կյանքի և խնդիրների հետ: Սակայն դեռևս հնագույն ժամանակներից աստղագիտությունը, այնուհետև աստղաֆիզիկական ծառայել են մարդկության կարևորագույն խնդիրներին:

Բոլոր օրացույցները հիմնված են աստղագիտական գիտելիքների վրա: Գիտության շատ ճյուղեր, այդ թվում և ֆիզիկան, մեծ չափով զարգացել են հենց Տիեզերքից ստացված գիտելիքների հիման վրա: Բավական է հիշել տիեզերական ձգողության օրենքը, երկնային մեխանիկայի օրենքները, հարաբերականության տեսությունը, կորագիծ տարածության գաղափարը, ծայրահեղ վիճակներում նյութի

գոյաձևերը, ճառագայթման այլընտրանքային մեխանիզմները, էներգիայի նոր ձևերը և աղբյուրները, գրավիտացիայի տեսությունը և այլն:

Օրինակ՝ Իսահակ Նյուտոնը կամ որևէ մեկ ուրիշը երբեք չէր բացահայտի տիեզերական ձգողության օրենքը, եթե չլինեին երկնային մարմինների շարժումների ուսումնասիրությունները և Կեպլերի օրենքները: Հանս Բեթեն հայտնաբերեց էներգիայի նոր՝ ամենաէֆեկտիվ աղբյուրը (ջերմամիջուկային ռեակցիաները) Արեգակի ընդերքի ճառագայթման մեխանիզմը հասկանալու ձգտման շնորհիվ: Ալբերտ Այնշթայնի հարաբերականության տեսությունը ստեղծվել և ապացուցվել է հենց տիեզերական փորձերի հիման վրա: Տիեզերքը մի հսկայական լաբորատորիա է, որում հնարավոր է դիտել և ուսումնասիրել նյութի բոլոր հնարավոր գոյաձևերը, էներգիայի բոլոր տեսակները, բոլոր ֆիզիկական երևույթները և ծայրահեղ ֆիզիկական պայմաններում նյութի վարքագիծը: Վերջապես, աստղագիտությունն աշխարհընկալման և աշխարհաճանաչման գլխավոր ոլորտն է:

Հայաստանի համար աստղագիտությունը, մասնավորապես՝ Բյուրականի աստղադիտարանը, բարձրացնում է երկրի միջազգային հեղինակությունը, երկրի վարկանիշը: ԲԱ շնորհիվ ստեղծվեց ՄԱՄ տարածաշրջանային աստղագիտական կենտրոն, և Հայաստանը պաշտոնապես դարձավ Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի առաջատարը, գրանցվեց որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստագրական արժեք, որով երկիրը ներկայանում է աշխարհին: Միայն այս օրինակներն արդեն բավարար են, որ ամեն կերպ զարգացնենք մեր մեծ գիտնական Վիկտոր Համբարձումյանի ստեղծածը:

Իսկ մեր երիտասարդ սերնդի համար աստղագիտությունը և ԲԱ-ն ծառայում են որպես գիտության, գիտելիքի հետ ծանոթացման առաջին կարևոր քայլերից մեկը, քանի որ աստղագիտությունը բոլոր գիտությունների մեջ նաև ամենահանրամատչելին է:

Մեծ է մեր կրթական և հանրային գործունեությունը: Այլ գործնական օգուտներից կարելի է նշել օրինակ նաև գիտական տուրիզմի զարգացումը:

7. Ի՞նչ է Ձեզ համար Բյուրականի աստղադիտարանը:

Բյուրականի աստղադիտարանն ինձ համար տուն է, ընտանիք, հարազատ օջախ: Հետաքրքիր է, որ աստղադիտարանում աշխատած բոլոր սերունդների մոտ էլ այդ զգացողությունն է:



48 ամ AZT-14 աստղադիտակ

Շատերը սիրում են փոխել իրենց աշխատավայրը, հասկանալի է, գուցե ցանկանում են որևէ թարմություն մտցնել կամ առաջիադացում ունենալ:

Ես ամենասկզբից (1986թ.) աշխատել և աշխատում եմ Բյուրականի աստղադիտարանում և, չնայած բազմաթիվ այլ առաջարկներին, արտասահմանից բազմաթիվ հրավերներին, արտասահմանյան բազմաթիվ այցելություններին և աշխատակցություններին, նույնիսկ արտասահմանում գիտական ինստիտուտի տնօրենի պաշտոն զբաղեցնելու առաջարկին՝ ես աշխատելու եմ այստեղ մինչև կյանքիս վերջին օրերը:

Ինձ հետաքրքրում է ոչ թե պաշտոնը կամ վաստակած գումարը, այլ հարազատ միջավայրում իմ սիրելի մասնագիտության մեջ Տիեզերքի գաղտնիքների բացահայտման տարերքը: Բացի այդ Բյուրականի աստղադիտարանը Ազգային արժեք է (և ոչ միայն սահմանված կարգավիճակով), տարածաշրջանային աստղագիտական կենտրոն է, Հայաստանի այցեքարտերից մեկն է և մեր բոլորի պարծանքը:

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը